



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ք.Ստեփանակերտ

“1” դեկտեմբերի 2014թ.

N- 822- Ն

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐ ԵՎ  
ՓՈՐՁՆԱԿԱՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

“Մարդահամարի մասին” Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 4-րդ և 8-րդ հոդվածներին համապատասխան, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում 2015 թվականին անցկացվելիք մարդահամարի նախապատրաստումն ու անցկացումն ապահովելու, ինչպես նաև հերթական մարդահամարի նախապատրաստման և անցկացման աշխատանքներին օժանդակելու նպատակով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը

**ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հերթական մարդահամարն անցկացնել 2015 թվականի դեկտեմբերի 1- ից մինչև 9-ը ներառյալ:

2. Փորձնական մարդահամարն անցկացնել 2015 թվականի մարտի 17-ից մինչև 26-ը ներառյալ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հաղրուփի շրջանի Տոդի և Մարտակերտի շրջանի Հաթերքի գյուղական համայնքներում:

3. Առաջարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության նախագահին՝

1) մեկամսյա ժամկետում կազմել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում 2015 թվականին անցկացվելիք մարդահամարի նախապատրաստման, անցկացման և նյութերի մշակման ծախսերի նախահաշիվը և այն ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն.

2) մինչև 2015 թվականի մարտը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում 2015 թվականին անցկացվելիք մարդահամարի նախապատրաստման և անցկացման համապետական, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի և շրջանային հանձնաժողովների կազմերը:

4. Հանձնարարել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրապետական գործադիր մարմինների ղեկավարներին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերի ղեկավարներին և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտի քաղաքապետին համակողմանիորեն աջակցել վիճակագրական մարմիններին՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում 2015 թվականին անցկացվելիք մարդահամարի նախապատրաստման ու անցկացման աշխատանքների կատարման գործում:

5. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հաղրութի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանների վարչակազմի ղեկավարներին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտի քաղաքապետին ապահովել գործուն օժանդակություն՝ փորձնական մարդահամարի նախապատրաստման և անցկացման ամբողջ ժամանակաընթացքում:

6. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտաքին գործերի նախարարին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության պետին և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության տնօրենին՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության նախագահի հետ համատեղ հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում 2015 թվականին մարդահամարի անցկացման ժամանակ բնակչության առանձին խմբերի (զինծառայողներ, ձերբակալվածներին և կալանավորվածներին պահելու վայրերում գտնվող, ուղղիչ հիմնարկներում պատիժը կրող անձինք, հյուպատոսական և դիվանագիտական հիմնարկների անձնակազմեր) հաշվառման կարգերը:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՎԱՐՉԱՊԵՏ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**